ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քննության առնելով ՀՀ վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/20» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը ստորև ներկայացնում եմ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) (ՀՎՀՀ 02910767) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար չհրկիզվող պահարանների ձեռքբերման նպատակով վարչապետի աշխատակազմի կողմից հայտարարվել է «ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/20» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն: Հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 18.10. 2024թ.-ին:

«ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/20» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 18.10.2024թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերոյթյան կողմից ներկայացված հայտը եղել է թերի, չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես, հայտարարությունը (Հավելված 1) ստորագրված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, համակարգում կցված չէ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված 1.3), ինչպես նաև առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում ապրանքի ֆիրմային անվանումը, արտադրողի անվանումը և տեխնիկական բնութագիրը լրացված չեն:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ կարգ) 41-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ծանուցել «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքայի օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

22.10.2024թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի կողմից շտկումը կատարվել է և սահմանված ժամկետում ներկայացվել են փաստաթղթերի շտկված տարբերակները, ուստի նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին և պայմանագիր կնքելու նպատակով վերջինիս առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում՝ գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով, ինչպես նաև որակավորման ապահովում՝ գնման գնի 15 (տասնհինգ) տոկոսի չափով, որոնց ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Նույն օրը Հանձնաժողովը որոշել է հաստատել և հրապարակլ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

Սակայն, ս.թ. հոկտեմբերի 31-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերության կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույները, որպիսի հանգամանքը Հանձնաժողովի կողմից արձանագրվել է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Ըստ այդմ, Հանձնաժողովը որոշել է առաջարկել պատվիրատուի ղեկավարին «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի նկատմամբ նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ:

Միաժամանակ, 01.11.2024թ. www.gnumner.am կայքում պատվիրատուն հրապարակել է «ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/20» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը:

Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո ***օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը*** կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ)

որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ***ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:***

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, ***եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:***

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Հաշվի առնելով վերը շարադրված իրավանորմերը և փաստացի հանգամանքները՝ պատվիրատուն արձանագրում է, որ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն՝ ճանաչվելով «ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/20» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակից՝ սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից ստորագրած պայմանագիրը և դրանով իսկ ***զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից***:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա են «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ -ին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությամբ նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, և որոշում եմ՝ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ -ին ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ